



«Կրթությունն առանց սահմանի» ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կենսաբանությունն առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացում

Ուսուցիչ՝ Հերմինե Սարգսյան

Ղեկավար՝ Կիմա Սարգսյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----3

ԳԼՈՒԽ 1 ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

1.1 Բնագիտական կրթության արդիականացման հիմնախնդիրն ի նպաստ
ստեղծագործական ունակությունների զարգացման-----5

1.2 Ինտեգրացված դասն ու սովորողի ստեղծագործական կարողությունների
զարգացումը -----7

1.3 Սովորողների մոտ ստեղծագործական ունակությունների զարգացում, կենսա-
բանության դասին -----11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ -----

17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Եղիր այն ուսուցիչը,

Ում դու ես երազել ունենալ....

Բնագիտական կրթությունը ընդհանուր կրթության կարևոր բաղադրիչ է, որը հումանիտար, մաթեմատիկական, տնտեսագիտական, տեխնոլոգիական բաղադրիչների հետ, համապատասխան կրթական չափորոշիչներով, ուսումնական ծրագրերով, դասագրքերով, ուսուցման նյութատեխնիկական բազայով և ուսուցչի մասնագիտական գործունեությամբ ապահովում է սովորողի անձի կրթությունն ու համակողմանի զարգացումը:

Քաղաքակրթական զարգացման տարբեր փուլերում բնագիտական կրթությունն իրականացվել է տարբեր ուսումնական առարկաների՝ ֆիզիկայի, աստղագիտության, քիմիայի, կենսաբանության, ֆիզիկական աշխարհագրության հիմունքների ուսուցմամբ: Նշված առարկաների բովանդակային մասը, դրանց ուսուցմանը հատկացված ժամաքանակը, ուսուցման տևողությունը միշտ էլ կախված են եղել սովյալ առարկայի գիտության զարգացումներից և հասարակական կյանքի վրա թողած ազդեցություններից:

Թեմայի արդիականությունը

Պետության կրթական համակարգի, դպրոցի պատվերը թե՛ ուսումնական առարկաների քանակի, թե՛ դրանց բովանդակության առումով ձևավորվում է ըստ հասարակության պահանջների ու քաղաքակրթական զարգացումների: Ասվածից հետևում է, որ պարբերաբար հարկ է անդրադարձ կատարել ինչպես ուսումնասիրվող առարկաների ցանկին, այնպես էլ դրանց ծրագրերին, չափորոշիչներին ու բովանդակությանը, հետևաբար՝ նաև դասագրքերին: Տվյալ ժամանակաշրջանի համար խիստ անհրաժեշտ և հետագա զարգացումների համար հիմք հանդիսացող այս երևույթը կարելի է անվանել նաև կրթական արդիականացում:

Չեռագոտության նպատակը

Սովորողների պրակտիկ գործունեության փորձի ձեռքբերում՝ ուսումնասիտագոտական և ստեղծագործական աշխատանքներով:

Չետագոտության խնդիրները

- Սովորողի մեջ ձևավորել հետագոտական աշխատանք կատարելու փորձ
- Ձևավորել սեփական աշխատանքը ճիշտ կազմակերպելու և ժամանակը խնայելու ունակություններ
- Ցուցաբերել ստեղծագործական ակտիվություն:

Չետագոտության ընթացքում կիրառված մեթոդները՝

➤ **տեսական՝** ուսումնասիրության թեմա հանդիսացող նյութի վերաբերյալ առկա գրականության, ուսումնական և մեթադական ձեռնարկների, ծրագրերի և չափորոշիչների ուսումնասիրություն:

➤ **Էմպիրիկ՝** սովորողների ստեղծագործական ունակությունները խթանող և զարգացնող դասերի կազմակերպում և վարում:

Չետագոտության նորույթը

Կենսաբանական նյութերի ուսումնասիրման արդյունքում համապատասխան մեթոդների և պլանավորված աշխատանքների միջոցով նպաստել սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Չետագոտության օբյեկտը

Առարկայի դասագրքերում ներառված նյութերի ամբողջությունը և ուսուցչի ստեղծագործական կարողությունները, որպես խթան, սովորողների մեջ ստեղծագործական ունակություններ ձևավորելու համար:

Չետագոտության առարկան

Չետագոտության առարկան կենսաբանության դասերի միջոցով սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորումն է:

**ՔԼՈՒԽ 1 ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՉԱՐԳԱՑՈՒՄ**

**1.1 Բնագիտական կրթության արդիականացման հիմնախնդիրն ի նպաստ
ստեղծագործական ունակությունների զարգացման**

Բնագիտական կրթության արդիականացման խնդիրը հասարակության կողմից խիստ պահանջարկված է: Բանական Էակը՝ մարդը կարողացել է մատմական զարգացման ընթացքում փոխել իր ապրելակերպը, զարգացնել տնտեսություն, ստեղծել հարուստ մշակույթ: Այդ բոլոր ձեռքբերումների գլխավոր պատճառներից մեկը կրթությունն է: Առանց կրթության մոլորակի վրա գիտական առաջընթաց չէր լինի, իսկ վերջինս, ինչպես արդեն նշվեց, խիստ կարևոր էր տեխնիկայի ու տեխնոլոգիաների զարգացման համար, որոնք տարբեր ժամանակներում դրված էին արդյունաբերական զարգացման հիմքում:

Ժամանակակալից կրթության նպատակներից մեկն անհատի կարողությունների զարգացումն է, մասնավորապես ստեղծագործական կարողությունների, որը կարելի է իրականացնել ուսումնական առարկաների հնարավորություններով:

21-րդ դարում Երկրի վրա արդեն ձևավորվում է տեղեկատվական հասարակություն, որտեղ մարդը պետք է կարողանա հարմարվել տեխնիկատեխնոլոգիական շատ իրողությունների ու տիրապետի դրանցով աշխատելու ձևերին ու մեթոդներին: Այդ գործընթացին միանշանակ նպաստում են ապագա քաղաքացիների ձեռք բերած գիտական գիտելիքները ու դրանց գործնականում ստեղծագործաբար կիրառելու կարողությունները:

Մեր ժամանակներում կրթությունն ընդհանրապես, բնագիտական ու կենսաբանական կրթությունը՝ մասնավորապես, պետք է իրականացվի ժամանակակալից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառմամբ: Չգացվում է, որ գիտելիքների մատուցման ավանդական եղանակները, ձևերն ու մեթոդներն արդեն մասնակիորեն չեն համապատասխանում ժամանակի և ժամանակակալից դպրոցին ներկայացվող պահանջներին: Այս երևույթը տեղային չէ, այն համաշխարհային մասշտաբի կրթական հիմնախնդիր է, որի լուծումը պետք է գտնվի համատեղ ուժերով: Ի վերջո, այսօր աշխարհում ընթանում է համաշխարհայնեցման՝ գլոբալացման ակտիվ գործընթաց, որն ընդգրկել է կյանքի տարբեր ոլորտներ ու հատկապես կրթական համակարգը: Այս առումով կրթության արդիականացումը և նրա համաշխարհայնացումը կարելի է դիտարկել որպես ամբողջական գործընթացի երկու կարևոր դրսևորումներ:

Կրթության արդիականացումը նրա կառուցվածքային և բովանդակային փոփոխությունն ու համապատասխանեցումն է ժամանակակալից պահանջներին, որոնք են.

➔ սովորողի անձի նկատմամբ առավել ուշադրության դրսևորում,

→ նրա ուսումնական ընդունակությունների, մասնավորապես ստեղծագործական ունակությունների զարգացում,

→ կրթության ուղղորդում դեպի սովորողների անհատական և տարիքային առանձնահատկությունների առավելագույն հաշվառման դաշտ,

→ յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունների հաշվառում ու դրան համապատասխան ուսուցման կազմակերպում:

Հանրակրթական դպրոցում բնագիտական առարկաների արդյունավետ ուսուցման գլխավոր հարցերից մեկը բնագիտական առարկաները բոլոր աշակերտների համար հետաքրքիր ու պահանջված դարձնելն է: Խոսքը հիմնական դպրոցի մասին է, քանի որ ավագ դպրոցում արդեն սովորողներն ունեն որոշակի առարկայական կողմնորոշում և գիտակցված ընտրություն են կատարում հետագա մասնագիտական հիմունքներին ավելի խորը տիրապետելու համար: Այդ տեսանկյունից այսօրվա հանրակրթական դպրոցն ամեն ինչ պետք է աի, որպեսզի բոլոր սովորողները, իրենց ընդունակություններին և հետաքրքրություններին համապատասխան, ստանան բնագիտական կրթություն: Իսկ բնագիտական առարկաների ուսուցումն ավելի հետաքրքիր դարձնելու համար պետք է նախ՝ ունենալ բնագիտական առարկաների պետական ծրագրերի բազմազանություն՝ պայմանով, որ իրականացվի բնագիտական առարկաների խորը ուսուցում:

Անհնարին է բնագիտական դպրոցական կրթությունն արդիականացնել առանց գիտականորեն հիմնավորված ու ժամանակի թելադրած փոփոխություններով կազմված ուսումնական առարկայական ծրագրերի ու դրանց համապատասխան դասագրքերի: Դասագիրքն ուսումնական առարկան սովորողի կողմից ընդունվելու, նրանով հետաքրքրվելու բանալին է: Լավ, հաջողված դասագիրքը, իրոք, ազգային արժեք է, որովհետև դրանով կրթվում և դաստիարակվում են սերունդներ: Ինչքան էլ մեր ժամանակներում ուսումնական տեղեկույթ ստանալու աղբյուրները շատ ու մատչելի լինեն, միջևույն է, դասագրքի դերը վճռորոշ է լինելու: Ուրախությամբ պետք է նշել, որ անկախության տարիներին ՀՀ-ում ստեղծվել են հանրակրթական առարկաների՝ այդ թվում նաև բնագիտական ուղղությունների բոլոր դասագրքերը:

Ժամանակակից բնագիտությունը նրա հիմունքները մեծ ներուժ են պարունակում 21-րդ դարի ապագա քաղաքացու մեջ բնապահպանական, էկոլոգիական պաշար, Էներգախնայողական մշակույթ և ստեղծագործական կարողություններ ձևավորելու համար:

1.2 Ինտեգրացված դասն ու սովորողի ստեղծագործական կարողությունների զարգացումը

Ժամանակակից մանկավարժության կարևոր խնդիրներից մեկը գիտելիքի ձեռքբերման նկատմամբ սովորողների հետաքրքրության խթանումն է: Այսպիսի հարցադրումը պայմանավորված է այն անժխտելի փաստով, որ սովորողների մեջ փոքր է գիտելիքի յուրացման գործընթացում ներգրավվածության աստիճանը: Պատճառներից մեկն ավանդական տիպի դասերի կազմակերպումն է՝ նոր սերնդի համար, որն, ի տարբերություն ավագ սերնդի, ավելի ինքնուրույն է, ունի լավ զարգացած ինքնագիտակցություն, կարող է հստակ պատկերացնել իր պահանջները, և, որ ավելի կարևոր է, հնարավորություն ունի օգտվելու տեղեկության տարբեր աղբյուրներից: Ուստի ավանդական (պատմողական, բացատրական) դասը, որպես կանոն, նրան չի կարող բավարարել:

Որոշ հեղինակների կարծիքով՝ ուսումնառության գործընթացի մեջ սովորողների ներգրավումը խթանելու համար, ակադեմիական գիտելիքներ մատուցելուց զատ, կարևոր է ուսումնառության գործընթացի հուզականության ակտիվացումը (զարմանք, հետաքրքրություն, հարցադրումների խթանում և պատասխան որոնելու ցանկություն) կյանքի տարբեր իրավիճակներում գիտելիքի արժեքավորության ցուցադրումը և այլն:

Մյուս կողմից, կրթության որակի բարձրացման և դասավանդման նոր տեխնոլոգիաների որոնման ճանապարհին ժամանակն առաջադրում է մի կարևոր մարտահրավեր ևս՝ ծրագրերի բեռնաթափում, մատուցվող նյութի առավել դիպուկ ընտրություն:

Ժամանակակից մանկավարժության մեջ նշված խնդիրները միաժամանակ շահեկանորեն լուծելու բանալիներից մեկը ինտեգրված ուսուցման ներդրումն է, որն ուղղված է սովորողների մեջ ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Դրա կարևորությունն ու նպատակները լուսաբանող բազմաթիվ աշխատանքներ կան մասնագիտական գրականության մեջ: Տեսական մանկավարժության մեջ ինտեգրացումը դիտարկվում է բավական լայն իմաստով, օրինակ՝ մանկավարժության և այլ գիտությունների, կրթության բովանդակության բաղադրիչների, ուսուցման դաստիարակչական ազդեցությունների, ուսուցման ձևերի ու մեթոդների, բնագիտական գիտելիքների և ճանաչողական մեթոդների ինտեգրացում և այլն:

Հայտնի է, որ բնագիտական առարկաների դասավանդման դիդակտիկական խարսխված է հիմնականում դասավանդվող գիտության ճանաչողական մեթոդների վրա: Հետևաբար՝ ուսուցման գործընթացում բնագիտական գիտելիքների ինտեգրացման հարցը հարկ է դիտարկել նաև գիտելիքների միասնության գաղափարի և դասավանդվող առարկաների բազմազանության համադրությամբ: Այս նպատակով նախ հղում տանք 20-րդ դարի նշանավոր բնագետ Վ. Ի. Վերնադսկուն, ում կարծիքով՝ «Գիտական միտքը բարդ խնդիրը բաժանում է ավելի պարզերի, որոնց լուծումով զբաղվում են տարբեր գիտություններ: Սակայն գիտության բարձրագույն խնդիրը գիտական աշխարհայացքի ձևավորումն ու

զարգացումն է, աշխարհի միասնական պատկերի ստեղծումը: Գիտական գիտելիքի միասնությունը բացարձակ է և չունի վաղեմության ժամկետ»:

Մյուս կողմից, ԱՄՆ-ում հաջողությամբ իրականացված «Ուսուցիչներ նոր դարի համար» ծրագրի հեղինակ, մանկավարժության երախտավոր Վարդան Գրիգորյանը գրում է. «Ժամանակակից բարձրագույն կրթությունը շարունակում է գիտելիքները բաժանել առարկաների, ենթա և ենթաենթաառարկաների՝ դարձնելով դրանք ակադեմիական կրթության տարանջատված մասնիկներ: Չնայած գիտելիքների տարանջատման խնդիրը դիտարկվել է դեռևս 17-րդ դարում, բայց առավել զարգացում է ստացել անցյալ դարում: Մինչդեռ գիտելիքի, դրա միասնության, բազմազանության, սահմանափակումների, օգտագործման և չարաշահումների ընկալումն այսօր չափազանց կարևոր է ժողովրդավարության հաջողության համար: Տեղեկատվությունը իր բոլոր ձևերով, մակարդակներով և շատ անգամ առանց պատճառ բովանդակության, անընդհատ գրոհում է մեզ բոլոր ուղղություններով: Եվ գիտելիքների համադրման կարևորությունն ու համակարգված մտածողությունը շրայլություն չէ, այլ պարզապես անզևահատելի անհրաժեշտություն»:

Այսօր հանրակրթության և բարձրագույն մասնագիտական կրթության մեջ ներմուծվում են նորանոր ինտեգրացված առարկաներ: Իհարկե, ինտեգրացված առարկաների ուսուցման կազմակերպումը բարդ խնդիր է, ուստի համընդհանուր մոտեցումների մասին դեռ վաղ է խոսել: Սակայն, որպես առաջին քայլ, արդեն մասնագիտական գրականության մեջ քննարկվում է ինտեգրացված թեմատիկ միավորների և ինտեգրացված դասերի ներդրման կարևորության հարցը:

Ըննդունված է տարբերակել ինտեգրացված դասերի երկու տեսակ՝ ներառարկայական և միջառարկայական (բազմառարկա): Ինտեգրացված դասերի միառարկա տարատեսակն ամենատարբեր նպատակներով կազմակերպվում է ներառարկայական գիտելիքների ինտեգրացման սկզբունքով: Իսկ բնության որևէ երևույթի կամ համակարգի ուսումնասիրումը տարբեր գիտությունների տեսությունների ու օրենքների հիման վրա իրականացվում է բազմառարկա ինտեգրացված դասերի միջոցով, որոնց կազմակերպմանն ու անցկացմանը կարող են մասնակցել տարբեր մասնագիտությունների ուսուցիչներ՝ յուրաքանչյուրն իր դերով: Կախված նպատակից՝ բազմառարկա դասերը կարող են ինտեգրացնել նաև դասավանդող այլ, ոչ բնագիտական առարկաների գիտելիքներ:

Ինտեգրացված ուսուցման նպատակներն ու խնդիրները դիտարկելիս, քննարկվել են ինտեգրացված դասերի կազմակերպման որոշ տեսական և գործնական հարցեր: Անհրաժեշտ է նշել.

➤ Գիտելիքների միջառարկայական ինտեգրացումը շատ ավելին է, քան միջառարկայական կապերի ներկայացումը: Այն ավելի շատ ստեղծագործական մոտեցում է պահանջում: Ըստ Էռլթյան, բնագիտական առարկաների բնագավառում ինտեգրացված

դասի ընդհանուր գաղափարական սկզբունքը պետք է լինի այն, որ կա ուսումնասիրության մեկ առարկա՝ բնությունը:

➤ Ինտեգրված դասի կազմակերպումը պետք է ապահովի սովորողների (նաև դասավանդողների) հետազոտական գործունեությունը, որով և պայմանավորված է ինտեգրացման նպատակամետությունը: Այդ գործունեությունը պետք է զարգացնի պատճառահետևանքային կապեր բացահայտելու և լուծելու կարողություն, տրամաբանական մտածողություն, գիտելիքը դարձնի ամբողջական և հիմնարա, և ի վերջո զարգացնի նաև սովորողի ստեղծագործական կարողությունները, ի շնորհիվ կատարած առեղծի ինքնուրույն աշխատանքի: Մյուս կողմից, որևէ երևույթի հնարավորինս բազմակողմանի դիտարկում ճանապարհ է բացում բացահայտումների, «հայտնագործությունների» համար, որն ապահովում է ուսումնառության հուզական բաղադրիչը և կարևոր պայման է գիտելիքի արժևորման ու ինքնաբավարարման, սեփական ուժերի նկատմամբ վստահություն ձեռք բերելու համար:

Սովորողների հետազոտական գործունեության կազմակերպման առավել հարմար տեխնոլոգիան համագործակցային ուսուցումն է, ուստի այս ոգով կրթված երեխան սոցիալականացվում է և «սպառողից» դառնում է մշակույթի ու այլ արժեքների «արարող»:

➤ Կարևորվում է նաև ինտեգրացված դասի հումանիստական ուղղվածությունը: Դա նշանակում է, որ մաքուր գիտական գիտելիքների արժևորումից զատ, անհրաժեշտ է կարևորել նաև յուրացված ակադեմիական գիտելիքների կապը կյանքի հետ, դրանց բացահայտումը շրջապատող աշխարհում կատարվող երևույթների մեջ: Դա կօգնի սովորողին բացահայտել բնության միասնականությունը, հասկանալ ամենօրյա կյանքի ճիշտ կազմակերպման համար բնագիտական գիտելիքների կարևորությունը, դրսևորել ստեղծագործ, պատասխանատու վերաբերմունք կյանքի և բնության նկատմամբ:

Ինտեգրացված դասերը բազմանպատակ ու բազմաձև են: Սակայն դրանք կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք ընդհանուր պահանջներ:

● Սկսել նպատակների հստակեցումից՝ ինչպես յուրաքանչյուր աշխատանք: Ինտեգրացված դասի նախագծման առանձնահատկությունն այն է, որ տվյալ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկող գիտությունները կարող են հանդես գալ հավասարազոր ներդրումներով, կամ դրանցից մեկը կարող է լինել գերիշխող (ինտեգրացումը կրող): Օրինակ, եթե ուսուցանվում է «Մարսողություն» թեման և ինտեգրացումը կրողը կենսաբանությունն է, ապա հարակից առարկաներն առարկայաան գիտելիքներով ամբողջացնում են մարսողության մասին պատկերացումները: Զիմիան կարող է հանդես գալ մարսողության ընթացքում մարդու օրգանիզմում տեղի ունեցող քիմիական պրոցեսների տվյալները ներկայացնելով, կերպարվեստը՝ մարսողական համակարգը կազմող օրգանների կառուցվածքային առանձնահատկությունները նկարագրող պատկերների ներկայացումով, ինֆորմատիկան, այդ օրգանների SՅՏ

մողելների, նկարների, շարժանկարների, տեսանյութերի ներկայացմամբ, օտար լեզուները՝ թեմայի շրջանակներում ընդունված և օգտագործվող տերմինաբանության ներկայացմամբ և այլն: Առարկայական և միջառարկայական գիտելիքները հավասարազոր ներդրումով սովորաբար հանդես են գալիս ինտեգրված թեմատիկ միավորումներում: Ուստի կարևոր է գլխավոր նպատակի առանձնացումն ու հստակ ձևակերպում:

- Ուսումնասիրել ինտեգրացվող առարկաների ծրագրային համապատասխանությունը:

- Գնահատել դասարանի ընդհանուր պատրաստվածության մակարդակը և գործողությունները համապատասխանեցնել սովորողների տարիքային ու պատրաստվածության մակարդակին:

- Կատարել ինտեգրավված մանկավարժների և սովորողների գործողությունների դերաբաշխում:

- Ապահովել դասի տարբեր փուլերում ինտեգրացված առարկայական գիտելիքների փոխկապակցվածություն:

- Պլանի նախագծումից և դասի ընթացքը մտովի պատկերացնելուց հետո մշակել գնահատման ենթակա առաջադրանքներ, գիտելիքների գնահատման չափանիշներ ող սանդղակ: Նշենք, որ գնահատման չափանիշներն ու դասի նպատակները հարմար է սովորողներին ներկայացնել դասի սկզբում՝ իրենց հնարավորությունների և ժամանակի ճիշտ օգտագործումն ապահովելու համար:

- Ապահովել դասի կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներն ու դիդակտիկ նյութերը, սարքավորումները՝ դրանք նախօրոք փորձարկելով:

Բազմառարկա ինտեգրացված դասերի պլանավորման պահանջները մենք քննարկել և փորձարկել ենք ՇՊՁ-ում՝ մարզի տարբեր մասնագիտական ուսուցիչների, դասավանդման մեթոդիկա դասավանդող դասախոսների և ուսանողների համար կազմակերպված «Ինտեգրացված ուսուցման առանձնահատկությունների ուսուցում» թեմայով դասընթացի շրջանակներում:

Ուսուցման կազմակերպման նոր ուղին հենվում է ՀՀ-ում իրականացված կրթության բարեփոխումների նախորդ փուլերում մանկավարժների ու սովորողների ձեռքբերումների վրա: Դրանցից հատկապես նշենք համագործակցային ուսուցման ու ՏՀՏ-ի կիրառումով ինտեգրացված ուսուցման հմտությունները, որոնք կարևորվել են այն ժամանակաշրջանում, երբ կրթության առաջնահերթ խնդիրն էր՝ մարդուն սովորեցնել ապրել տեղեկատվական աշխարհում, ձևավորել ՏՀՏ-ից օգտվելու մշակույթ ու զարգացնել ստեղծագործական ունակություններ: Ինտեգրացված նոր նոր մակարդակի ու տեսակի դասերի

կազմակերպման համար այսօր արդեն ուսուցչից պահանջվում է ՏՀՏ-ի օգտագործման հնարավորությունը ծառայեցնել տարբեր խնդիրներ ավելի արագ ու արդյունավետ լուծելուն և սովորողի ինքնուրույն, հետազոտական ու ստեղծարար գործունեությունը զարգացնելուն: Եվ չպետք է մոռանալ Նեյլ Փոստմանի նախազուշացումն այն մասին, որ չնայած տեխնոլոգիան առավել հասանելի, արագ ու կիրառական է դարձնում տեղեկատվությունը, բայց «համակարգիչը չի կարող մեզ տալ կազմակերպված, բարոյական աշխատանքային ոլորտ: Այն չի կարող ասել, թե որ հարցերն են հնչելու արժանի»:

Ակնհայտ է, որ ուսուցման կազմակերպման նկատմամբ այսպիսի մոտեցումը ուսուցչից պահանջում է ընդհանուր մտավոր բարձր մակարդակ, համագործակցային հմտություններ, պատասխանատվություն ու շահագրգռվածություն: Ուստի արդյունավետ ու արժեքավոր ինտեգրացված դասի կազմակերպումը միաժամանակ բացահայտում է նաև ուսուցչի մասնագիտական ու ստեղծագործական ներուժը:

Սակայն ամենակարևորը մանկավար-ուսուցչի մեջ սերն է իրեն վստահված մատաղ սերնդի և իր գործի նկատմամբ, քանզի բարի պտուղներ ծնվում են միայն սիրուց:

1.3 Սովորողների մոտ ստեղծագործական ունակությունների զարգացում, կենսաբանության դասին

Իսկ հիմա դիտարկենք կենսաբանություն առարկայի դերը սովորողների մեջ ստեղծագործական ունակություններ, ինքնուրույնության և նախաձեռնողականության ձևավորման գործընթացում: Կենսաբանություն առարկայի կարևոր առանձնահատկություններից է այն հանգամանքը, որ այն կապ է հաստատում մարդու և բնության, ինչպես նաև բնագիտական և հասարակական առարկաների միջև: Կենսաբանություն առարկայի շնորհիվ աշակերտները ոչ միայն գիտելիքներ են ձեռք բերում բնություն վերաբերյալ, այլ նաև վերաբերմունք և արժեհամակարգ: Դպրոցական կրթություն բովանդակությունը ներկայումս ընդգրկում է ոչ միայն գիտելիքներ եվ կարողություններ այլ նաև ստեղծագործական գործունեության փորձ և հուզարժեքային վերաբերմունք շրջակա աշխարհի նկատմամբ: Այս ամենի կրողն ու ձևավորողը անշուշտ ուսուցիչն է: Բազմաթիվ հոգեբանական խնդիրներ կենտրոնանում են ուսուցչի շուրջ: Մի կողմից նրա վերաբերմունքը դեպի աշակերտը և երեխայի հոգու վրա ունեցած ներգործությունը, մյուս կողմից էլ իր սեփական աճն ու զարգացումը ստեղծում են հոգեբանական մի բարդ համակարգ, որի բաղադրամասերը ձևավորում են ուսուցչի կերպարը: Այդ բաղադրիչներն են՝

- մանկավարժական ուղղվածություն;

✿ մանկավարժական իրազեկություն;

✿ Հուզական ճկունություն:

Մանկավարժական ուղղվածությունը հուզարժեքային համակարգ է, որը ձևավորում է ուսուցչի անձի զարգացման շարժառիթները և մղում նրան կայանալու մանկավարժական գործունեության և շփման մեջ: Դրա զարգացման հոգեբանական պայմանը ուսուցչի սեփական վարքագծի և այն բարելավելու գիտակցության կարևորությունն է:

Մանկավարժական իրազեկությունը ուսուցչի կողմից սեփական գիտելիքների փոխանցման եղանակների ու հնարների տիրապետուն է ու դրանց կիրառումը դասապրոցեսում՝ սովորողի անձի զարգացման նպատակով: Դրա հոգեբանական պայմանը ուսուցչի կողմից սեփական մասնագիտական որակների և մշակույթի բարձրացումն ու հաղորդակցման ճիշտ կազմակերպումն է:

Հուզական ճկունության բարձր մակարդակ ունեցող ուսուցիչը, աշակերտների հետ շփման ժամանակ կարողանում է ստեղծել աշակերտի մոտ հոգեբանական պաշտպանվածության և անվտանգության զգացում, ապահովում է մանկավարժական գործունեության բարձր արդյունավետություն, դրական ազդեցություն է թողնում աշակերտի անհատականության ձևավորման վրա:

Կենսաբանության ժամանակակից դաս, որն ուղղված է սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Կենսաբանության ժամանակակից դասը ունի նպատակ սովորողներին ընդգրկելու դասապրոցեսին, ստեղծելու մի միջավայր, որտեղ սովորողը չի կաշկանդվի և կկարողանա իր մտքերը արտահայտել, ցանկություն կունենա ակտիվ մասնակցել դասին և ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում:

Ի՞նչ է նշանակում ժամանակակից դաս: Շատ մեթոդիստներ այն հակադրում են ավանդական դասին: Սակայն դրանց մեջ կան նմանություններ: Երկուսում էլ կա կյանքի հաղորդում, ամրապնդում: Սակայն կան մի շարք տարբերակիչ հատկանիշներ:

Առաջին տարբերությունը դասի նպատակի շարժառիթի որոշումն է: Դասի նպատակի և շարժառիթի որոշման պայմաններում պետք է առանձնացնել ոչ միայն գիտելիքի յուրացման և հմտություններ ձևավորման մտավոր ունակությունների զարգացման խնդիրները, այլև ստեղծագործական գործունեության փորձի և շրջակա աշխարհի վերաբերյալ հուզարժեքային վերաբերմունքի ձևավորման խնդիրը:

Երկրորդ տարբերությունը ուսուցչի դերի և գործառույթի փոփոխությունն է դասի շրջանակներում: Տվյալ դեպքում աշակերտը դիտարկվում է որպես ինքնագարգացող սուբյեկտ, իսկ ուսուցիչը հանդես է գալիս որպես ուսումնական գործունեության կազմակերպիչ: Ուսուցիչը դասի ընթացքում որոշակիացնում է դասի նպատակն ու մատնանշում թեմայի ուսումնասիրման շարժառիթը, տալիս է հանձնարարություն, խորհրդատվությամբ օգնում է յուրացնել ուսումնական աշխատանքների եղանակներն ու ձևերը:

Ժամանակակից դասում կարևոր է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, ուսումնական առաջադրանքների և խնդիրների ինքնուրույն լուծումը: Այս կապակցությամբ դասի ժամանակ առավելագույնս ավելանում է ինքնուրույն աշխատանքների մասնաբաժինը: Ավանդական դասին սովորաբար բացակայում է աշակերտների մեջ շփումը, ժամանակակից դասում կիրառվում է խմբային աշխատանքի ձևեր, զույգերով աշխատանքներ, որոնք ենթադրում են շփում աշակերտների միջև՝ այսինքն մտքերի փոխանակում, գիտելիքների և կարողությունների փոխադարձ ստուգում:

Երրորդ տարբերությունը աշակերտի և ուսուցչի փոխհարաբերությունների փոփոխությունն է՝ ի տարբերություն ավանդական դասի, ուր գերկշռում են ուսուցչի ավտորիտար ոճը, ժամանակակից դասում պետք է գերակայի համագործակցության մթնոլորտը: Ուսուցչի և աշակերտի համագործակցությունը կարող է արտահայտվել ուսումնական աշխատանքների կազմակերպման եղանակների ընտրության մեջ, ինչպես նաև ուսուցչի որոշ գործառույթների փոխանցումը աշակերտներին: Ուսուցիչը կարող է առաջարկել աշակերտներին աշխատել զույգերով կամ փոքր խմբերով, աշխատանքի արդյունքների հետագա փոխադարձ ստուգման ակնկալիքով:

Չորրորդ տարբերությունը ուսուցման կազմակերպման տրամաբանության փոփոխությունն է: Կարևոր տարբերություն է հանդիսանում յուրացված գիտելիքների կիրառումը նոր գիտելիք և կարողություն ձեռք բերելու համար: Այս կապակցությամբ փոխվում է դասի կառուցվածքը, և աշակերտի ինքնուրույն աշխատանքները կազմակերպվում են բոլոր փուլերում: Դասի նպատակի որոշման պարագայում հաշվի է առնվում ոչ միայն յուրացած գիտելիքների ծավալը, այլև յուրացման մակարդակը ընկալման և մտապահման մակարդակով, գիտելիքների կիրառման մակարդակով, ստեղծագործական մակարդակով: Դասի նպատակները որոշվում են դասի յուրաքանչյուր բլոկի համար: Այսպիսով՝ կենսաբանության ժամանակակից դասին ներկայացվող պահանջներն են՝

→ Ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակների որոշակիացում, դասի կրթական, զարգացնող, դաստիարակող նպատակների հստակեցում: Կրթական խնդրով

որոշվում է դասի բովանդակության գիտական մակարդակը: Այս կարևոր պահանջը արտահայտվում է ծրագրում հասկացությունների համակարգով, որոնք պետք է յուրացվեն սովորողի կողմից: Չարգացնող նպատակը իրականացվում է հմտությունների ձևավորման ճանապարհով, որոնք նախատեսված են ծրագրով: Նշված նպատակներն ամբողջապես պետք է ուղղված լինեն ուսման դրդապատճառի ձևավորմանը:

→ Դասագրքի բովանդակությունը պետք է համապատասխանի ուսուցչի կողմից տրվող նյութին, սակայն պարտադիր ն չէ նույնությամբ կրկնվի: Ուսուցիչը պետք է առավել խորությամբ այն ներկայացնի՝ շեշտը դնելով երևույթի կամ օբյեկտի ծագումնաբանության փոխկապակցության և պատճառահետևանքային կապերի բացահայտմանը:

→ Նյութից կարևորի ընտրությունը թույլ կտա բացահայտել թեմայի էությունը: Այն պետք դիտարկվի և ուսումնասիրվի առավել խոր ու հետաքրքիր, քան դասագրքում: Որը կնպաստի աշակերտների ակտիվ մասնակցությանը և դասի ավելի արագ յուրացմանը: Այսինքն պետք է առատորեն օգտվեն լրացուցիչ գիտատեղեկատվական աղբյուրներից՝ և՛ ուսուցիչը և՛ սովորողը, որն էլ իր հերթին նպաստում է սովորողների նախաձեռնողականության և ինքնուրույնության ձևավորմանը:

→ Ուսումնական նյութի արդիականացումը պետք է պայմանավորված լինի գիտության ժամանակակից տվյալների առկայությամբ: Որքան էլ նորացվեն դասագրքերը, ժամանակի ընթացքում առաջ են գալիս նոր գիտական տվյալներ, որոնք դուրս են մնացել դասագրքից: Էական փոփոխությունների է ենթարկվել հենց կենսաբանություն գիտությունը: Ներկայումս նրա գլխավոր խնդիրը կայանում է բնական միջավայրի վրա մարդու ունեցած ներգործության հետևանքների գիտական կանխատեսման մեջ:

→ Կենսաբանության դասին ներկայացվող հիմնական մանկավարժական պահանջը, դասի միասնականությունն է տրամաբանական և դիդակտիկական առումներով: Առաջնահերթ պետք է հստակեցվի դասի դիդակտիկական խնդիրները, որը դասը կդարձնի ավելի հետաքրքիր և կնպաստի դասի լավ յուրացմանը:

→ Աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: 6-8րդ դասարաններում սովորողների ակտիվացման կարևոր ուղին Դիդակտիկ նյութերի ցուցադրումն է: Բարձր դասարաններում՝ լաբորատոր աշխատանքները, որը իր հերթին սովորողների մոտ զարգացնում է ստեղծագործականությունը և ինքնուրույնությունը:

Աշակերտների իմացական գործունեության ակտիվացման ամենաարդյունավետ ճանապարհը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է: Այն ստեղծվում է պրոբլեմային


հարցերի միջոցով, որոնք հետաքրքրություն են առաջացնում և տալիս են մտածողությանը որոշակի ուղղվածություն:

Նկարների տեսքով կիսվեմ սեփական փորձիցս մի քանի օրիակներ, որոնք ուղղված են եղել սովորողների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Աշխատանքները մեծամասամբ եղել են խմբային աշխատանքների տեսով, որի ընթացքում աշակերտները ինֆորմացիան գտել, մշակել, առաջնայինն ու կարևորը երկրորդականից առանձնացրել են ինքնուրույն, և իրենց աշխատանքները ներկայացրել են սեփական մեթոդներով և ձևաչափերով: Դասերը եղել են ինտեգրված, և՛ միջառարկայական, և՛ ներառարկայական:

1. 9րդ դասարան – Թեմա՝ Բջիջ



2. 8-րդ դասարան – Թեմաներ՝ Հենաշարժիչ և Մարսողական համակարգեր, Չգայարաններ





ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առողջ և ներդաշնակ անձնավորություն կրթելն ու դաստիարակելը հասարակության առաջնահերթ խնդիրն է, հատկապես բարդացող սոցիալական պայմաններում, ուստի այսօրվա սովորողից պահանջվում է ակտիվություն, նախաձեռնություն, ինքնուրույնություն, ձեռներեցություն և աշխատելու Էներգիա:

Սովորողի մեջ խնդիրներն ստեղծագործաբար լուծելու ունակությունների ձևավորելու համար անհրաժեշտ է առաջին հերթին զարգացնել ու լայնացնել նրա առարկայական գիտելիքների շրջանակը՝ երևակայության համար զգայական հիմքեր ստեղծելով: Առանձնացվում են սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորման հետևյալ պայմանները.

→ ուսումնական նյութի զարգացնող հնարավորությունների գերակայությունն նրա տեղեկատվական հագեցվածության նկատմամբ.

→ սեփական հետազոտական պրակտիկայի կիրառության գերակայությունն գիտելիքների վերարտադրողական յուրացման նկատմամբ.

→ ուղղորդվածությունն դեպի ինտելեկտուալ նախաձեռնություն, որը ենթադրում է սովորողի ինքնուրույն դրսևորում տարբեր ուսումնական և հետազոտական խնդիրներ լուծելիս, ձգտում՝ գտնելու խնդրի լուծման ինքնատիպ, հնարավոր այլընտրանքային ուղի, դիտարկելու հիմնախնդիրն առավել խոր մակարդակով:

Առարկայով հետաքրքրված, առարկայով տարված և առարկային սիրահարված սովորողի ստեղծագործական ունակությունները սահմաններ չունի, անընդհատ ու անվերջ հիանալ կարելի է նման երեխաների մտքի թռիչքով: Ընդամենը հարկավոր է առարկան սովորողին ներկայացնել իր բոլոր առանձնահատկություններով և նրբություններով, գեղեցկությամբ ու խորությամբ, որպեսզի սովորողը տեսնի այն, ինչ մյուսները պատկերացնել անգամ չեն կարող, արդյունքում անհնարինը նա կդարձնի հնարավոր իր ճկուն մտքի և ստեղծագործական կարողությունների շնորհիվ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթայան Կ.Ի., Բնագիտական, տեխնիկական և մաթեմատիկական կրթության հայեցակարգային մոտեցումներ, Բնագետ, 2017
2. Մնացականյան Յ.Ն., Մնացականյան Ա.Է., Ինտեգրված դասերի անհրաժեշտությունն ու մոտեցումները, Բնագետ 2016
3. Կենսաբանության մեթոդական ձեռնարկ 2008թ. Թանգամյան
4. Կենսաբանության առարկայական դասագիրք դասագիրք Է. Գևորգյան, Ֆ. Դանիելյան, Ա. Եսայան, Գ. Սևոյան:
5. Համացանց
<https://thestrip.ru/hy/kinds-of-makeup/razvitie-tvorcheskoi-aktivnosti-formirovanie-tvorcheskoi-aktivnosti/>